


1.2. Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

**Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը:** 2006թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում, ըստ 2222 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առածգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 411203.9 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 419119.0 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 33077.5 մլն. դրամի, այլ երկրներում՝ 112105.9 մլն. դրամի արտադրանք:

2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 99.1%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 99.3 %:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան  
2004թ. դեկտեմբերի նկատմամբ, %



Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան

(%)

2005թ.	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
հունվար	81.7	100.7	81.7
փետրվար	113.2	110.1	92.5
մարտ	111.6	103.7	103.2
ապրիլ	96.7	96.3	99.8
մայիս	103.2	110.9	103.0
հունիս	106.2	106.4	109.4
հուլիս	102.6	112.7	112.3
օգոստոս	89.2	105.1	100.2
սեպտեմբեր	105.8	105.6	106.0
հոկտեմբեր	103.7	103.8	109.9
նոյեմբեր	101.5	114.3	111.5
դեկտեմբեր	100.0	106.7	111.5

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
<b>2006 թ.</b>			
հունվար	73.3	98.7	73.3
փետրվար	113.3	97.9	83.0
մարտ	99.4	87.0	82.5
ապրիլ	111.9	100.5	92.3
մայիս	99.2	102.0	91.6
հունիս	102.5	100.5	93.8
հուլիս	100.6	99.7	94.4
օգոստոս	90.6	99.9	85.5

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն  
ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2006թ. հունվար-օգոստոսին<sup>1</sup>**

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով <sup>2</sup> , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով <sup>2</sup> , մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
<b>Ամբողջ արդյունաբերությունը</b>	<b>411203.9</b>	<b>419119.0</b>	<b>99.1</b>
<i>այդ թվում՝</i>			
<b>էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում</b>	<b>73122.9</b>	<b>73122.9</b>	<b>97.7</b>
<i>դրանից՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	67501.1	67501.1	99.5
<i>որից՝</i>			
էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	57319.3	57319.3	97.1
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	10181.8	10181.8	115.9
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	5621.8	5621.8	80.4
<b>հանքագործական արդյունաբերություն</b>	<b>72998.0</b>	<b>72857.1</b>	<b>102.4</b>
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	70499.5	70484.6	101.8
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	2498.5	2372.5	126.6
<b>մշակող արդյունաբերություն</b>	<b>265083.0</b>	<b>273139.0</b>	<b>98.7</b>
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրություն	117849.7	114971.4	103.4
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	9780.2	11655.2	94.4
մանածագործական արտադրություն հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	1857.9	1762.2	102.9
1536.1	1503.2	106.0	
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	285.5	276.6	155.4
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	739.5	799.7	138.1
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	5838.2	5738.9	114.5
	Թողարկված	Պատրաստի	Արդյունաբերական


<sup>1</sup> Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն գեներվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

<sup>2</sup> Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ



	արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով <sup>1</sup> , մլն. դրամ	արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով <sup>1</sup> , մլն. դրամ	արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
քիմիական արդյունաբերություն	9848.4	13103.0	89.1
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	2083.8	2474.5	107.7
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	19714.1	19901.8	116.7
մետաղագործական արդյունաբերություն	73326.8	76377.4	105.7
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	5681.0	5700.5	155.6
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	3964.9	4425.7	100.9
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	4287.6	6218.2	77.8
գործունեության այլ տեսակներ	8289.3	8230.7	103.1

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2006թ. հունվար - օգոստոսին





<sup>1</sup> Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:



Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում





Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում



Հանքագործական արդյունաբերություն



Մշակող արդյունաբերություն



1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2006թ. հունվար-օգոստոսին արտադրված (հաշվառվող) 123 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 76 -ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2005թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակի կապակցում նշանակության արտադրանքի՝ 70 -ից 45 -ի և սպառողական ապրանքների՝ 53 -ից 31 -ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները<sup>1</sup>

(մլն. դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-օգոստոսին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2006	2005 <sup>2</sup>	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	144535.5	142891.1	101.2
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	89601.4	85189.9	105.2
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	25937.4	26179.0	99.1
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	28996.7	31522.2	92.0
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության <sup>3</sup>	6738.7	6754.2	99.8
նշակութակենցաղային և տնտեսական նշանակության	22258.0	24768.0	89.9

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները<sup>4</sup>

	2006թ. հունվար-օգոստոս	2005թ. հունվար-օգոստոս	2006թ. հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %
Միս <sup>5</sup> , տոննա	28784	25907	111.1
Սսամթերք, ներառյալ երչիկեղեն, տոննա	1128.8	884.6	127.6
Պանիր, տոննա	9751.7	9685.9	100.7
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) <sup>5</sup> , տոննա	264024	249215	105.9
Պաղպաղակ, տոննա	2228.7	1638.8	136.0
Պահածո, տոննա	5808.3	5436.8	106.8
Ալյուր, տոննա	88181.6	92843.5	95.0
Ձավարեղեն, տոննա	282.9	745.5	37.9
Հաց և հացամթերք, հազ. տոննա	197.4	197.4	100.0
Հրուշակեղեն, տոննա	4078.6	2772.7	147.1
Սակարոնեղեն, տոննա	1900.3	1644.4	115.6
Շաքարավազ, տոննա	1525.0	1467.0	104.0
Բուսական յուղ, տոննա	2375.0	191.8	12.4 անգամ
Օղի և օղու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	7496.0	8139.9	92.1
Կոնյակ, հազ. լիտր	4585.8	5013.3	91.5
Գինի, հազ. լիտր	1626.6	1270.0	128.1
Շամպայն գինի, հազ. լիտր	177.6	189.3	93.8
Գարեջուր, հազ. լիտր	9553.6	7885.9	121.1
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	23843.5	19790.1	120.5
Բնական հյութեր, հազ. լիտր	3678.4	2770.3	132.8
Հանքային ջրեր, հազ. լիտր	17594.4	15216.7	115.6
Աղ, տոննա	21716.8	20348.4	106.7
Սիգարետներ, մլն. հատ	1804.4	1867.1	96.6
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	245.8	665.2	37.0

<sup>1</sup> Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

<sup>2</sup> 2005թ սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2006թ. գներով:

<sup>3</sup> Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

<sup>4</sup> Այստեղ և հետագայում բերված տեղեկատվությունը առավել մանրամասն գետնովում է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):

<sup>5</sup> Ներառյալ գյուղատնտեսական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

**Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները**

	2006թ. հունվար-օգոստոս	2005թ. հունվար-օգոստոս	2006թ. հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %
Բամբակյա զործվածքներ, հազ. մ <sup>2</sup>	136.2	116.9	116.5
Գորգեր և զորգեղեն, մ <sup>2</sup>	18460	19025	97.0
Գուլպեղեն, հազ. զույգ	449.8	256.6	175.3
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	2426.0	1607.6	150.9
Կարի արտադրանք <sup>1</sup> , մլն. դրամ	4673.0	4388.9	106.5

2006թ. հունվար-օգոստոսին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից լաբաներկանյութերի արտադրությունը 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ ավելացել է 32.7%-ով, քիմիկա-դեղագործական արտադրանքինը՝ 8.8%-ով, պլաստմասսայե արտադրատեսակներինը՝ 8.3%-ով, իսկ սինթետիկ կաուչուկի և կաուստիկ սոդայի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 27.9 և 22.2%-ով:

**Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները**

	2006թ. հունվար-օգոստոս	2005թ. հունվար-օգոստոս	2006թ. հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ <sup>3</sup>	28707	20179	142.3
Ապրանքային բետոն, մ <sup>3</sup>	72560	56796	127.8
Երեսպատման սալեր բնական քարից, մ <sup>2</sup>	128414	108759	118.1
Ոչ հանքային շինանյութեր, հազ. մ <sup>3</sup>	281.0	243.2	115.5
Կիր, տոննա	12220	5954	2.1 անգամ
Ցեմենտ, հազ. տոննա	419.9	363.0	115.7
Գաջ, տոննա	29320	27730	105.7
Ուղիղ կտրվածքի տուֆ, մ <sup>3</sup>	37519	35266	106.4
Ծակոտկեն լցանյութեր, մ <sup>3</sup>	130486	94006	138.8
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ <sup>2</sup>	42422	33443	126.8

**Մետաղագործական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից 2006թ. հունվար-օգոստոսին 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատությամբ մոլիբդենի խտանյութի արտադրությունն ավելացել է 41.6%-ով, պղնձի խտանյութում պղնձինը՝ 8.9%-ով, իսկ ֆեռոմոլիբդենի և կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 12.3 և 8.6%-ով:

<sup>1</sup> Ներառյալ պատվիրատուի հունքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

**Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները**

	2006թ. հունվար-օգոստոս	2005թ. հունվար-օգոստոս	2006թ. հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	30	21	142.9
Ուելե, հատ	162455	201294	80.7
Ուժային ճկուն կաբելներ, կմ	170.0	122.6	138.7
Տեղակայման հաղորդալարեր, կմ	1035.2	200.8	5.2 անգամ
Էմալապատ լարեր և փաթութալարեր, տոննա	116.1	52.2	2.1 անգամ
Էլեկտրաեռակցման սարքավորումներ, հատ	5099	6175	82.6
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	-	1243.7	-
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	136	79	172.2
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	9571	9320	102.7
Պոմպեր, հատ	535	254	2.1 անգամ
Համակարգիչներ, հատ	1165	1406	82.9
Էլեկտրական հաշվիչներ, հատ	14704	1605	9.2 անգամ
Գազային ջրատաքացուցիչներ, հատ	707	323	2.2 անգամ
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	149	283	52.7
Ավտոմոբիլային մարտկոցներ, հատ	-	2404	-
Ավտոգեներային սարքավորումներ, հազ. հատ	74.7	77.0	97.0
Մետաղահատ գործիքներ, հատ	119563	90234	132.5
Ցածրավոլտ էլեկտրական ապարատներ, հատ	57895	55678	104.0
Օպտիկա-մեխանիկական սարքեր և սարքավորումներ, հատ	1255	3377	37.2

Ընդհանուր առմամբ, 2006թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում թողարկվել է 4102.8 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 95.6%-ը: Ընդ որում, ՀԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 10.1% -ով, իսկ ՋԷԿ-երում և ՀԱԷԿ-ում նվազել է, համապատասխանաբար, 19.5 և 5.7% -ով:

2006թ. հունվար-օգոստոսին ՀԱԷԿ-ը թողարկել է 1933.8 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 47.1% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 814.2 մլն. կվտ ժամ և 19.8%-ը, ՀԷԿ-երը՝ 1353.0 մլն. կվտ ժամ և 33.0%-ը, հողմային էլեկտրակայանը՝ 1.8 մլն. կվտ ժամ և 0.1%:

2006թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում թողարկվել է 241.3 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 73.1%-ը: